ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԹԵՍՏ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ

Ներկայացվում է քննության թեստի էլեկտրոնային բուկլետը:
Թեստի առավելագույն միավորը 70 է:
Թեստը լրացնելու համար տրվում է 4 ժամ:
Ուշադրությո՛ւն. անհասկանալի ձեռագրով աշխատանքը չի ստուգվի:

Հաջորդ էջ անցնելու և հետ դառնալու համար կարող եք օգտվել ստեղնաշարի այն կոճակներից, որոնց վրա սլաքներ են պատկերված:

Մաղթում ենք հաջողություն:

Հայոց լեզու (35 միավոր)

(2) 1. **Աշակերտը գրել է.** *Հույների զորքն ուներ երեք հարյուր երկանիվ և հարյուր հիսուն քառանիվ մարտակարգ:*

- Ցո՛ւյց տվեք նրան՝ ինչպիսի սխալ է թույլ տրված նախադասության մեջ:
- Բացատրե՛ք աշակերտին՝ ինչ պետք է իմանա, որպեսզի նմանատիպ սխալ թույլ չտա:

(2) **2. Աշակերտը գրել է.** *Ուշ գիշերին դերասանները դուրս եկան թատրոնից և վերադարձան իրենց տները:*

- Ցո՛ւյց տվեք նրան՝ ինչպիսի սխալ է թույլ տրված նախադասության մեջ:
- Բացատրե՛ք աշակերտին՝ ինչ պետք է իմանա, որպեսզի նմանատիպ սխալ թույլ չտա:

(2) **3. Աշակերտը գրել է.** *Այգի ամենաճանաչելի բույսերից մեկը, որը ծաղկում է վաղ գարնանը, գարնանածաղիկն է:*

- Ցո՛ւյց տվեք նրան՝ ինչպիսի սխալ է թույլ տրված նախադասության մեջ:
- Բացատրե՛ք աշակերտին՝ ինչ պետք է իմանա, որպեսզի նմանատիպ սխալ թույլ չտա:

(2) **4. Աշակերտը գրել է.** *Երգեցե՛ք հայրենի երգերը, որ ձեր պապերն ու ապուպապերն էին երգում տխրության և ուրախության ժամին:*

- Ցո՛ւյց տվեք նրան՝ ինչպիսի սխալ է թույլ տրված նախադասության մեջ:
- Բացատրե՛ք աշակերտին՝ ինչ պետք է իմանա, որպեսզի նմանատիպ սխալ թույլ չտա:

(2) **5. Աշակերտը գրել է.** *Վարչապետը երեկ ելույթ է ունեցել, ըստ որում տնտեսական ճգնաժամը դեռ երկար կշարունակվի:*

- Ցո՛ւյց տվեք նրան՝ ինչպիսի սխալ է թույլ տրված նախադասության մեջ:
- Բացատրե՛ք աշակերտին՝ ինչ պետք է իմանա, որպեսզի նմանատիպ սխալ թույլ չտա:

(2) **6. Աշակերտը գրել է.** *Որ նա մեզ հովանավորի, մենք շատ պետք է սիրաշահենք ու գովերգենք նրան:*

- Ցո՛ւյց տվեք նրան՝ ինչպիսի սխալ է թույլ տրված նախադասության մեջ:
- Բացատրե՛ք աշակերտին՝ ինչ պետք է իմանա, որպեսզի նմանատիպ սխալ թույլ չտա:

(2) **7. Աշակերտը գրել է.** *Այդ հսկա քաղաքը, մարդաշատ և աղմկոտ, ապրելու տեղ չէ։*

- Ցո՛ւյց տվեք նրան՝ ինչպիսի սխալ է թույլ տրված նախադասության մեջ։
- Բացատրե՛ք աշակերտին՝ ինչ պետք է իմանա, որպեսզի նմանատիպ սխալ թույլ չտա։

(4) **8. Դուք պետք է աշակերտներին բացատրեք համաձայնությունը՝ որպես շարահյուսական կապակցման միջոց:**

I – Նշե՛ք համաձայնությանը վերաբերող երկու-երեք կանոն, որոնց պետք է տիրապետեն աշակերտները:

II – Կազմե՛ք երկու հարց՝ ներկայացնելով համաձայնությանը վերաբերող օրինակներ, որոնք ճիշտ են գրական լեզվի կանոնների տեսակետից:

(7) **9. Կարդացե՛ք Հակոբ Կարապենցի «Ազատ խոսքի մասին» ստեղծագործությունից հետևյալ հատվածը.**

«Թե ինչու եմ գրում, ինքս էլ չգիտեմ:

Թերևս, որովհետև բառերն ինձ համար նույնն են, ինչ արյան կաթիլները՝ կյանքի համար:

Թերևս, որովհետև շարունակ զգում եմ մահկանացությունս:

Ու թերևս, որովհետև արվեստը արտացոլումն է կյանքի ու հաճախ ավելի պարտադիր, քան կյանքը:

Բայց հիմնականում ոչ թե անմահությունն է, այլ մահը պարտության մատնելու մշտնջենական տենդը, որը պատճառն է ստեղծագործության: Ոչ թե հարատևումը, այլ վաղանցիկության կապույտ լարը, որից հնչում է ժամանակավորի երգը: Այդ երգը արձագանքում է սրտերում, երբ բանաստեղծը համարձակորեն անցողականի բիբերին է նայում: Այդ դեպքում նրա խոսքը լինում է հատու, հարազատ ու խիզախ:

Արվեստի միջոցով մոտենում ենք մեզ, մարդկայնանում, ուստի և մերձենում աստվածությանը»:

I – Ո՞րն է այս տեքստի գլխավոր ասելիքը:

II – Ձևակերպե՛ք մեկական փաստարկ՝ մեկը տեքստում ներկայացված կարծիքը հաստատելու համար, մյուսը՝ հերքելու:

III – Շարադրե՛ք Ձեր դատողություններն այն մասին, թե որ փաստարկն է Ձեզ համար ընդունելի և ինչու:

Հաշվի՛ առեք. այս առաջադրանքի պատասխաններում Ձեր թույլ տված ուղղագրական, կետադրական, քերականական կամ ոճաբանական սխալի համար 1 միավոր կհանվի:

(10) **10. Կարդացե՛ք աշակերտի գրավոր աշխատանքը և հետևե՛ք հետևյալ հրահանգներին.**

I – Գնահատե՛ք աշակերտի աշխատանքն ըստ I չափանիշի, գրե՛ք համապատասխան միավոր և բնագրից բերե՛ք համապատասխան օրինակ։

II – Գնահատե՛ք աշակերտի աշխատանքն ըստ II չափանիշի, գրե՛ք համապատասխան միավոր և բնագրից բերե՛ք համապատասխան օրինակ։

III – 1. Գնահատե՛ք աշակերտի աշխատանքն ըստ III չափանիշի, գրե՛ք համապատասխան միավոր և բնագրից բերե՛ք համապատասխան օրինակներ։

2. Որոշե՛ք յուրաքանչյուր սխալի տեսակը (ուղղագրական, ձևաբանական, կետադրական, շարահյուսական)։

Գնահատման չափանիշներ

N	*Չափանիշներ*	*Չափանիշների պարզաբանում*	*Միավոր*
I	Դատողության հիմնավորում (փաստարկ և եզրակացություն)	ա) Դատողությունը հստակ փաստարկված է, փաստարկները հիմնավորված են համապատասխան օրինակներով: բ) Դատողությունը մասամբ է փաստարկված, հիմնավորված չէ համապատասխան օրինակներով կամ թույլ է տրված փաստացի սխալ: գ) Տեքստը ճիշտ չի հասկացվել, դատողությունը համոզիչ չէ, օրինակները նույնպես չեն համապատասխանում դատողությանը:	2 1 0
II	Բառապաշար և ոճ	ա) Միտքը ճիշտ և հստակ է ձևակերպված, ոճաբանական առումով սխալներ չկան: բ) Միտքը ճիշտ է ձևակերպված, բայց բառապաշարն աղքատ է, կամ հանդիպում են ոճաբանական թերություններ: գ) Միտքը հիմնականում հասկանալի է, բայց գրվածքի ոճը խրթին է, հանդիպում են բառագործածության սխալներ:	2 1 0
III	Ուղղագրություն, քերականություն, կետադրություն	ա) Այս կարգի սխալների թիվը երեքից ավելի չէ: բ) Այս կարգի սխալների թիվը վեցից ավելի չէ: գ) Այս կարգի սխալների թիվը վեցից ավելի է:	2 1 0

Աշակերտին տրված առաջադրանք

Հասարակության կարծիքը հաճախ դրական ազդեցություն է ունենում մարդկանց կյանքում:

Համաձա՞յն եք արդյոք այս կարծիքին: Հաստատե՛ք կամ հերքե՛ք այն՝ բերելով համապատասխան փաստարկներ:

Աշակերտի շարադրությունը

Հասարակության կարծիքը մեծ ազդեցություն ունի մարդկանց վրա: Մեծ նշանակություն ունի մեր կյանքում հասարակության դերը: Այն, թե որտեղ ենք ապրում, ինչպիսի մարդկանցից ենք շրջապատված, ինչ դիրք ունենք այդ հասարակությունում, որոշիչ դեր է կատարում և հենց դրանով է պայմանավորված, թե որքան մեծ դեր ունի հասարակությունը մեր կյանքում:

Փորձե՛ք մի պահ փակել ձեր աչքերը ու մտովի վերհիշել, թե երբ են ձեր կյանքում մեծ շրջադարցեր կատարվել: Փորձե՛ք վերհիշել, թե որոնք են եղել դրանց պատճառները, ինչպես է սկսվել այդ ամենը, ու դուք կհասկանաք, որ այդ փոփոխությունների պատճառները միշտ եղել են աննշան ու անկարևոր բախումները մարդկանց հետ: Մարդիկ, որոնք գաղափար անգամ չունեն, որ իրենց այդ վարմունքով փոխել են ձեր կյանքը: Եթե փողոցի այն անկյունում հայտնվեիք մի քանի րոպե հետո ապա չէիք հանդիպի ու չէիք իմանա այնտեղ բացված նոր սրճարանի մասին, որտեղ, ի դեպ, հանդիպել եք ձեր ապագա կյանքի ընկերոջը: Եթե դասերից հոգնած չբացեիք սոցկայքը, ապա չէիք տեսնի հայտարարությունը միջազգային դպրոցի մասին ու երևի երբեք չէիք դառնա այդ դպրոցի սան:

Մարդիկ այս ամենն անվանում են անկանոն պատահականությունների տեսություն: Գիտե՞ք ինչու: Որովհետև մեր ամբողջ կյանքը՝ առաջին օրվանից մինչ մահ, բաղկացած է բազմաթիվ պատահականություններից: Պատահական դեպքերի շարան, որոնցում կա՛մ բախտդ բերում է, կա՛մ էլ ամեն ինչ տանել ես տալիս, իսկ հավանականությունները ու նրանց թվային արժեքները այստեղ ոչ մի նշանակություն չունեն. ամբողջ կյանքի ընթացքում մենք մահանում ենք միայն մեկ օր ու ապրում երկար-երկար տարիներ: Հնարավորություն տվեք մարդկանց փոխել ձեզ և պատրաստ եղեք նորությունների վրա: Հասարակության կարծիքը հաշվի առնելը վատ բան չէ, պարզապես պետք է վերլուծել և ընդունել այն, ինչը մենք ճիշտ ենք համարում:

Հայ գրականություն (20 միավոր)

(1) 11. **Իր «Վարք Մաշտոցի» ստեղծագործության մեջ Կորյունը գրում է.**

«Եվ այնպես [Մաշտոցը] տրտմական հոգսերով պաշարված ու թակարդապատված և մտածմունքների ծփանքի մեջ էր ընկած, թե արդյոք ինչպիսի՞ելք գտնի այդ բանի համար»:

Ի՞նչ նկատի ունի հեղինակը՝ Մաշտոցի հոգեկան այսպիսի վիճակը նկարագրելով.

ա) Արքունիքում ծառայությունը թողնելու պատճառով Մաշտոցը հայտնվել էր ծանր վիճակում:

բ) Հայերեն տառերի բացակայության պատճառով Մաշտոցը մեծ դժվարությունների էր բախվում:

գ) Մաշտոցին մտահոգում էր այն, որ Հայաստանում տարածված էին հեթանոսական, ստապատում գրքերը:

դ) Սիրիայի քաղաքները շրջագայելուց հետո անգամ Մաշտոցը չկարողացավ գտնել հայոց գրերը:

(1) 12. **Աշակերտը հարցնում է.** «Մենք 5-րդ դարի պատմիչների աշխատությունները ուսումնասիրում ենք «Հայոց պատմության» դասերին, ինչո՞ւ պետք է դրանք ուսումնասիրենք նաև հայ գրականության դասաժամերին»:

Ո՞ր տարբերակը չեք օգտագործի՝ աշակերտին պատասխանելու համար:

ա) Այդ երկերն աչքի են ընկնում իրենց պատկերավոր լեզվով, իմաստալից ասույթներով, դրանք ոչ թե չոր պատմություններն են, այլ մեր առաջին գրական հուշարձանները:

բ) Իրականում պատմիչները փորձել են ստեղծել ոչ թե պատմական, այլ գեղարվեստական գործեր, սակայն 5-րդ դարում այլ նյութ չգտնելով՝ անդրադարձել են միայն պատմությանը: Ուստի դա գրականություն է:

գ) 5-րդ դարի մատենագիրների գործերը ուսումնասիրելով՝ մենք անհրաժեշտաբար անդրադառնում ենք նաև հին առասպելներին, որոնք գեղարվեստական ստեղծագործություններ են:

դ) 5-րդ դարի պատմագրության մեջ հերոսները հանդես են գալիս ոչ միայն որպես պատմական, այլ նաև որպես գեղարվեստական կերպարներ՝ իրենց բնավորությամբ, հետաքրքրաշարժ երկխոսություններով:

(1) 13. **Առասպելաբանական առումով հայկական ժողովրդական «Սասունցի Դավիթ» էպոսում մեռնող և հարություն առնող աստվածություն են ներկայացնում.**

ա) Մեծ Միերը, Ցռան Վերգոն և Ձենով Օհանը:

բ) Մեծ Միերն ու Փոքր Միերը:

գ) Չմշկիկ Սուլթանն ու Մըսրա Մելիքը:

դ) Սանասարն ու Բաղդասարը:

(1) **14. Ի՞նչ նկատի ունի Միսաք Մեծարենցը, երբ Գրիգոր Նարեկացու լեզուն գնահատելիս ասում է.** *«գիտեր բառերը ծովաձայն հնչեցնել»*:

Ո՞ր տարբերակը կօգտագործեք՝ աշակերտին պատասխանելու համար:

ա) Գրիգոր Նարեկացին միջնադարյան քնարերգության մեծ նորարար է, ով բանաստեղծորեն պատկերեց մարդու ներաշխարհը:

բ) Գրիգոր Նարեկացին միջնադարյան գրականությունը հարստացրեց բանաստեղծական նոր ձևերով՝ խոսքին տալով բացառիկ ռիթմ և երաժշտականություն:

գ) Գրիգոր Նարեկացու բանաստեղծական պատկերավորման միջոցներն ու ձևերը անսպառ են և բազմազան:

դ) Գրիգոր Նարեկացուն հատկանշական է բանաստեղծական բարձրարվեստ, հմուտ խոսքը:

(1) **15. Մխիթար Գոշի առակներն ուսումնասիրելիս աշակերտը հարցնում է.** «Եթե առակները դիդակտիկ նշանակություն ունեն, ապա ինչո՞ւ էր դրանց նկատմամբ վերաբերմունքը ոչ միանշանակ, երբեմն նաև՝ բացասական»:

Ո՞ր տարբերակը կօգտագործեք՝ աշակերտին պատասխանելու համար:

ա) Այն ժամանակաշրջանում առակները հիմնականում նախատեսված էին ցածր խավի ներկայացուցիչների և ոչ թե ազնվական հասարակության համար:

բ) Առակների հերոսները հիմնականում կենդանիներն ու բույսերն էին, բայց իրականում դրանք վերաբերվում էին հասարակության մեջ գոյություն ունեցող արատներին:

գ) Հասարակության մի մասն անվստահությամբ էր վերաբերվում ցանկացած նորարարության նկատմամբ և առակներ գրելն անարժան գործունեություն էր համարում:

դ) Հոգևորականի կողմից առակներ գրելն անընդունելի էր, քանի որ նա պետք է գրեր միայն եկեղեցական թեմաներով:

(1) 16. **Ֆրիկի ստեղծագործությունն ուսումնասիրելիս աշակերտը հարցնում է.** Ի՞նչ նկատի ունի բանաստեղծը, երբ ասում է. *«Ո՛չ Ֆրրիկս յուսահատիմ. ո՛չ ի սիրոյ ես թերանամ, Քան ըզքեզ ծանօթ չունիմ, յայս դրանէս ո՞ւր հեռանամ»*:

Ո՞ր տարբերակը կօգտագործեք՝ աշակերտին պատասխանելու համար:

ա) Բանաստեղծն այս խոսքերով արտահայտում է հանդերձյալ կյանքում Աստծու էությանը մոտենալու, աստվածային լույսի ու անմահության արժանանալու ջերմ փափագ:

բ) Բանաստեղծն այս խոսքերով արտահայտում է մոնղոլների գերության մեջ գտնվող որդու կարոտը և նրա շուտափույթ վերադարձի հույսը:

գ) Ճգնավորի կյանքով ապրող բանաստեղծն այս խոսքերով արտահայտում է աշխարհիկ կյանքի հանդեպ իր սերն ու կարոտը:

դ) Ճգնավորի կյանքով ապրող բանաստեղծն այս խոսքերով արտահայտում է իր անսահման սերն ու նվիրվածությունը հայրենիքին:

(1) 17. **Ավետիք Իսահակյանը գրում է.**

«Չորս գիրք ունի հայ ժողովուրդը, որ, ինչպես չորս բարձր սյուներ, կրել են հայ ժողովրդի ոգին, նրա պայքարի իմաստը, նրա լավագույն ապագայի տենչանքները, նրա իդեալները»:

Ո՞ր հեղինակների աշխատությունների առանձնահատուկ նշանակությունն է ընդգծում Ավետիք Իսահակյանը հայ ժողովրդի պատմության մեջ:

ա) Ագաթանգեղոսի, Եղիշեի, Մովսես Խորենացու, Փավստոս Բուզանդի:

բ) Ագաթանգեղոսի, Կորյունի, Մովսես Խորենացու, Գրիգոր Նարեկացու:

գ) Եղիշեի, Մովսես Խորենացու, Գրիգոր Նարեկացու, Խաչատուր Աբովյանի:

դ) Ղազար Փարպեցու, Մովսես Խորենացու, Գրիգոր Նարեկացու, Խաչատուր Աբովյանի:

(1) 18. **Գաբրիել Սունդուկյանի ստեղծագործությունը քննարկելիս աշակերտը հարցնում է.** Ինչպե՞ս մեկնաբանել Արութինի՝ Պեպոյի մասին ասած այս խոսքերը.

«Էլ մինձ ու պստիկ չկա աշխրքում... Էն հանգի ախկատ դադոն էնենց վրես բղավի...»

Ո՞ր տարբերակը կօգտագործեք՝ աշակերտին պատասխանելու համար:

ա) Արութինը ձգտում է նվաստացնել Պեպոյին և դրանով իսկ վերականգնել սոցիալական հավասարությունը:

բ) Արութինը չի ընդունում սոցիալական հավասարության գաղափարը:

գ) Արութինը վիրավորված է և պատրաստ է վրեժ լուծել:

դ) Պեպոյի բղավոցի պատճառով Արութինը հյուրերի մոտ անհարմար է զգում:

(1) **19. Գրիգոր Զոհրապի կյանքն ու ստեղծագործությունը քննարկելիս աշակերտը հարցնում է.** «Որո՞նք են Գրիգոր Զոհրապի նորավեպերի բնորոշ հատկանիշները»։

Ո՞ր տարբերակը կօգտագործեք՝ աշակերտին պատասխանելու համար։

ա) Գրիգոր Զոհրապի նորավեպերը գեղարվեստորեն վեր են հանում պատմական իրականությունը։

բ) Գրիգոր Զոհրապի նորավեպերը համառոտ և իրատեսորեն արտահայտում են սոցիալական և մարդկանց հոգեբանական հիմնախնդիրները։

գ) Գրիգոր Զոհրապի նորավեպերը պարզ, անպաճույճ ու համառոտ ներկայացնում են արդի քաղաքական իրադարձությունները։

դ) Գրիգոր Զոհրապի նորավեպերը ռոմանտիկ շունչ են տալիս մարդկանց հոգեբանական ծանր վիճակին։

(1) 20. **Տրված է Նար-Դոսի «Բարերար և որդեգիր» վիպակից մի հատված.**

«Եթե մինը կամենար մի արձան կերտել, որ ներկայացնելիս լիներ, եթե կարելի է այսպես ասել – մի սոսկալի անսպասելիություն, ապա աղա Գրիգոր Մոսեիչը յուր այդ դրությամբ կարող էր կենդանի ու ամենաճիշտ օրինակի տեղ ծառայել»:

Ի՞նչ նկատի ունի հեղինակը, երբ գլխավոր հերոսին՝ Աղա Գրիգոր Մոսեիչին, համեմատում է արձանի հետ:

ա) Հեղինակը դրանով ցույց է տալիս Աղա Գրիգոր Մոսեիչի խստասիրտ ու ժլատ բնավորությունը:

բ) Հեղինակը դրանով ցույց է տալիս, որ Աղա Գրիգոր Մոսեիչին զարմացրել էր հանկարծակի դավաճանությունը:

գ) Հեղինակը նշում է, որ անսպասելի ուրախությունից մարդ կարող է տեղում քարանալ:

դ) Հեղինակը նշում է, որ Աղա Գրիգոր Մոսեիչը մի առանձնահատուկ արտաքինով մարդ էր:

(1) **21. Լևոն Շանթի կյանքն ու ստեղծագործությունն ուսումնասիրելիս աշակերտը հարցնում է.** Գրական ո՞ր հոսանքին է պատկանում Լևոն Շանթի «Հին աստվածները»:

Ո՞ր տարբերակը կօգտագործեք՝ աշակերտին պատասխանելու համար:

ա) «Հին աստվածները» պատմական ստեղծագործություն է. պիեսում գեղարվեստորեն ներկայացված են պատմական իրադարձությունները:

բ) «Հին աստվածները» ռեալիստական ստեղծագործություն է. պիեսում բնականորեն ներկայացված են իրական պատմությունները:

գ) «Հին աստվածները» ռոմանտիկական ստեղծագործություն է, որտեղ վեր են հանված վանահոր ու Մարիամ իշխանուհու, աբեղայի ու Սեդայի սիրո պատմությունները:

դ) «Հին աստվածները» սիմվոլիստական ստեղծագործություն է, դրամայում զուգահեռաբար ներկայացված են իրական և երևակայական աշխարհները:

(1) 22. **Վահան Տերյանի ստեղծագործությունն ուսումնասիրելիս աշակերտը հարցնում է.** «Ի՞նչ է թարգմանել Վահան Տերյանը վրաց գրականությունից»։

Թվարկվածներից ո՞րը կառաջարկեք աշակերտին։

ա) Ակակի Ծերեթելու «Թորնիկե էրիսթավի» պոեմի նախաբանը։

բ) Իլիա Ճավճավաձեի «Ճգնավորը» պոեմը։

գ) Շոթա Ռուսթավելու «Ընձենավորը» պոեմի նախաբանը։

դ) Վաժա-Փշավելայի «Հյուրն ու հյուրընկալը» պոեմը։

(1) 23. **Եղիշե Չարենցի «Դանթեական առասպել» պոեմի ո՞ր մեկնաբանությունը ճիշտ չէ:**

ա) Պոեմը սկսվում է պատերազմ մեկնող երիտասարդ կամավորների տոնական տրամադրության նկարագրով:

բ) Պոեմում առանձնահատուկ զգացմունքայնությամբ են ներկայացված պատերազմի հետքերը Կարսից դեպի Վան տանող ճանապարհին:

գ) Պոեմում հեղինակը գիտակցաբար խուսափում է ռազմական գործողությունները նկարագրելուց:

դ) Պոեմում նկարագրված ռազմական գործողությունները զինվորի օրագրի տեսք ունեն:

(1) 24. **Ակսել Բակունցի կյանքն ու ստեղծագործությունն ուսումնասիրելիս աշակերտը հարցնում է.** Ո՞ւմ մասին է Ակսել Բակունցը արտահայտվել հետևյալ բառերով.

«Հիանալի ֆիգուրա՝ ոչ միայն իր գրական նշանակությամբ, այլև իր կյանքով»:

Ո՞ր տարբերակը կօգտագործեք՝ աշակերտին պատասխանելու համար:

ա) Խոսքը Եղիշե Չարենցի մասին է, ում հետ Ակսել Բակունցը երկար տարիներ սերտ համագործակցել է:

բ) Խոսքը Խաչատուր Աբովյանի մասին է, ում աշխարհայացքի գնահատմանը գրողը գիտական հետազոտություն է նվիրել:

գ) Խոսքը Նիկոլայ Գոգոլի մասին է, ում «Տարաս Բուլբա» վեպը Ակսել Բակունցը թարգմանել է ռուսերենից հայերեն:

դ) Խոսքը Վարդան Այգեկցու մասին է, ում «Աղվեսագիրք» առակների ժողովածուն գրողը թարգմանել է աշխարհաբար:

(1) **25. Գուրգեն Մահարու ստեղծագործությունը ուսումնասիրելիս աշակերտը հարցնում է.** «Գուրգեն Մահարու «Ծաղկած փշալարեր» վիպակն առաջին անգամ ինչո՞ւ լույս տեսավ Բեյրութում և ոչ թե հեղինակի հայրենիքում»:

Ո՞ր տարբերակը կօգտագործեք՝ աշակերտին պատասխանելու համար:

ա) Գուրգեն Մահարին Հայաստանի Խորհրդային Հանրապետությունում արգելված հեղինակ էր:

բ) Հայաստանի Խորհրդային Հանրապետությունում արգելված էր ստալինյան ժամանակաշրջանի մասին վատ արտահայտվելը:

գ) Հայաստանի Խորհրդային Հանրապետությունում խորհրդային գաղափարախոսների կողմից արգելված էին անմարդկային վերաբերմունքի փաստերի բացահայտումները:

դ) Հայաստանի Խորհրդային Հանրապետությունում մինչև նախորդ դարի 90-ական թվականներ անհնար էր հրատարակել նման ստեղծագործություններ:

(1) 26. **Աշակերտը հարցնում է.** «Ինչո՞վ կարող ենք հիմնավորել, որ Եղիշե Չարենցի «Անակնկալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում» չափածո նովելի հերոսը Միքայել Նալբանդյանն է»:

Ո՞ր տարբերակը չեք օգտագործի՝ աշակերտին պատասխանելու համար։

ա) Գրողը մի քանի անգամ կրկնում է *հերոս* բառը, որը Միքայել Նալբանդյանի հայտնի պատվանուններից է:

բ) Հերոսի տեսիլքը համապատասխանում է Միքայել Նալբանդյանի արտաքինին:

գ) Ստեղծագործության բնաբանը Միքայել Նալբանդյանի բանաստեղծության տողերն են:

դ) Ստեղծագործության մեջ Միքայել Նալբանդյանի հայտնի բանաստեղծության բովանդակության հիշատակություն կա:

(1) 27. **Նաիրի Զարյանի «Արա Գեղեցիկը» ուսումնասիրելիս աշակերտը հարցնում է.** Ի՞նչ նպատակով է հեղինակը վերակենդանացրել առասպելական հերոսի՝ Արա Գեղեցիկի պատմությունը, որն արդեն լավ հայտնի էր Պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից»։

Ո՞ր տարբերակը կօգտագործեք՝ աշակերտին պատասխանելու համար։

ա) Հեղինակը ցանկացել է ցույց տալ առասպելական հերոսների սիրո պատմությունը։

բ) Հեղինակը ցանկացել է ցույց տալ Հայաստանի պատմության մեջ ամենանշանավոր իրադարձությունը։

գ) Հեղինակը ցանկացել է ցույց տալ, որ մարդը բարությամբ կարող է ձեռք բերել և՛ սեր, և՛ անմահություն։

դ) Հեղինակը ցանկացել է ցույց տալ, որ մարդկային կրքերը կործանարար են։

(1) 28. **Գրականագետ Հրանտ Թամրազյանը նկատում է.**

«[Այս գրողի] հերոսները ինչ-որ հարազատություն ունեն Թումանյանի, Զորյանի, Բակունցի հետ, քանի որ նույն տոհմից են, բայց կարծես նման են այն կրտսեր եղբայրներին, որոնք մտել են մի ուրիշ աշխարհ, բռնված են ուրիշ հոգսերով ու մտածումներով, թեև արյան մեջ պահել են հեռավոր հարազատների մշուշոտ պատկերները»:

Ո՞ր գրողի ստեղծագործությունը նկատի ունի հեղինակն այս խոսքերով.

ա) Հովհաննես Շիրազի:

բ) Հրանտ Մաթևոսյանի:

գ) Միքայել Նալբանդյանի:

դ) Նաիրի Զարյանի:

(1) 29. **Պարույր Սևակի «Վարք Մեծաց» ստեղծագործությունը սովորելիս աշակերտը հարցնում է.** «Հետևյալ տողերում՝ *«Մերում են նրանք և ա՛յն ծերուկից, Որ նախընտրում էր քնել տակառում»,* ո՞ւմ նկատի ունի բանաստեղծը»:

Ո՞ր տարբերակը կօգտագործեք՝ աշակերտին պատասխանելու համար:

ա) Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմի հերոսին:

բ) Հովհաննես Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմում հիշատակված թափառական աշուղին:

գ) Հույն փիլիսոփա Դիոգենեսին:

դ) Հույն փիլիսոփա Սոկրատեսին:

(1) 30. **Ըստ Վարդգես Պետրոսյանի ստեղծագործության՝ ո՞րն է համարվում Հայաստանի «բանալին».**

ա) Հայ գրականությունը:

բ) Հայկական մշակույթը:

գ) Հայոց լեզուն:

դ) Հայոց պատմությունը:

Գեղարվեստական տեքստի ըմբռնում (15 միավոր)

Ուշադիր կարդացե՛ք Վիլյամ Սարոյանի «Մարդկային կատակերգություն» վիպակից բերված հատվածը.

Միսիս Մաքոլին խոհանոցում պատրաստել էր սեղանը և սպասում էր իր Հոմեր որդուն, որը նախաճաշելու պիտի գար։ Նա ձավարով ճաշ էր դնում սեղանին, երբ որդին խոհանոց մտավ։ Մոր հայացքը շատ արագ սահեց որդու վրայով, ու նա հասկացավ, որ որդին դեռևս նախորդ գիշերվա երազի ազդեցության տակ է։ Թեև Հոմերը չէր հիշում, որ քնի մեջ լաց էր եղել, բայց նրա տրամադրությունն ընկած էր, ինչպես սովորաբար լինում է վշտից հետո։ Նույնիսկ նրա ձայնը ավելի խորն էր և մեղմ։

– Շատ քնեցի, – ասաց նա, – արդեն ինն անց է քսան րոպե։ Ի՞նչ է պատահել ժամացույցին։

– Դու շատ ես աշխատում, – ասաց միսիս Մաքոլին, – պետք է նաև հանգստանաս։

– Ես շատ չեմ աշխատում, – ասաց Հոմերը, – և հետո կիրակի է։

Նա առավոտյան աղոթքն արեց, միայն թե այդ օրը աղոթքը կրկնակի երկար թվաց։ Հետո վերցրեց գդալը և պատրաստվում էր ուտել, բայց կանգ առավ տարօրինակ ձևով և սկսեց ուսումնասիրել գդալը։ Տղան նայեց մորը, որ զբաղված էր խոհանոցում։

– Մայրիկ, – ասաց նա։

– Ի՞նչ է, Հոմեր, – պատասխանեց միսիս Մաքոլին առանց շրջվելու։

– Երեկ գիշեր, աշխատանքից գալուց հետո քեզ հետ չխոսեցի, – ասաց նա, – բայց դու ինձ նախազգուշացրել էիր, որ այդպես կարող է լինել։ Ես չէի կարող խոսել։ Տուն գալու ճանապարհին ես հանկարծ սկսեցի լաց լինել։ Դու գիտես, որ ես երբեք լաց չեմ եղել, նույնիսկ երբ փոքր էի, նույնիսկ դպրոցում, երբ ինձ հետ որևէ տհաճ բան էր պատահում։ Ես միշտ ամաչել եմ լաց լինելուց։ Յուլիսիսը նույնպես լաց չի լինում, որովհետև ի՞նչ օգուտ դրանից։ Բայց երեկ գիշեր ես պարզապես չկարողացա ինձ զսպել։ Լաց եղա և նույնիսկ չամաչեցի իմ լացից։ Եվ որովհետև հեկեկում էի, չկարողացա ուղիղ տուն գալ։ Հասա մինչև «Իթաքայի գինիները» և հետո, որովհետև դեռ լաց էի լինում, հեծանիվս քշեցի քաղաքի միջով մինչև միջնակարգ դպրոցը։ Ճանապարհին անցա մի տան

մոտով, որտեղ երեկ երեկոյան մարդիկ ուրախանում էին, իսկ այդ ժամին տունը մութի մեջ էր: Ես այդ մարդկանց մի հեռագիր էի տարել: Հասկանում ես, թե դա ինչ հեռագիր էր: Հետո քաղաք վերադարձա և հեծանիվս քշեցի փողոցներով՝ նայելով ամեն ինչին, բոլոր շենքերին, որոնք մանկությունից ծանոթ են ինձ: Այդ ժամանակ, կարծես առաջին անգամ, ես իսկապես տեսա Իթաքան և իսկապես ճանաչեցի այն մարդկանց, որոնք ապրում են Իթաքայում: Բոլորը լավ մարդիկ են: Ես ցավ զգացի բոլորի համար և նույնիսկ աղոթեցի, որ նրանց ոչինչ չպատահի: Դրանից հետո դադարեցի լալ: Կարծում էի, որ մարդ երբեք լաց չի լինի, երբ մեծանա, չափահաս դառնա, բայց պարզվում է, որ հենց այդ ժամանակ մարդը սկսում է լաց լինել, որովհետև այդ ժամանակ է, որ նա սկսում է հասկանալ ամեն ինչ: – Նա մի պահ լռեց, հետո նրա ձայնը նույնիսկ ավելի զուսպ դարձավ: –Գրեթե ամեն ինչ, որ մարդ ճանաչում է, կա՛մ վատ է, կա՛մ տխուր, - ասաց նա և սպասեց, որ մայրը մի բան ասի, բայց մայրը չխոսեց, նույնիսկ գլուխը չբարձրացրեց:

– Ինչո՞ւ է այդպես, – հարցրեց որդին:

Միսիս Մաքոլին սկսեց խոսել, բայց տղայի կողմը չդարձավ:

– Ժամանակը կգա, կհասկանաս, – ասաց նա, – ոչ ոք չի կարող քեզ բացատրել: Ամեն մարդ ինքն իր խելքով պիտի հասկանա: Եթե կյանքը տխուր է, ազնիվ կամ անմիտ, դրա պատճառը մարդն է: Եթե հարուստ է և գեղեցկությամբ լեցուն, ուրեմն ինքը՝ մարդն է այդպիսին և ոչ թե շրջապատը: Այդպես է: Եթե որևէ բան վատ է, տգեղ կամ խեղճ, միշտ ինքը՝ մարդն է այդպիսին, և յուրաքանչյուր մարդ ինքն իր մեջ մի աշխարհ է: Յուրաքանչյուր մարդ մի ամբողջական աշխարհ է, նա այդ աշխարհը կարող է վերակառուցել և սիրելի մարդկանցով բնակեցնել, եթե նրա սիրտը ընդունակ է սիրո, կամ լցնել ատելի մարդկանցով, եթե նրա սիրտը ընդունակ է ատելության: Աշխարհը պետք է վերակառուցվի ամեն օր, ինչպես անկողինն ու այն տունը, որտեղ նույն մարդիկ են ապրում: Այդ մարդիկ միշտ նույնն են, բայց և միշտ փոխվում են:

Մայրն այժմ ինչ-որ գործով էր զբաղված բակ տանող մուտքի մոտ: Հոմերը չէր տեսնում նրան, բայց շարունակում էր խոսել:

– Ինչո՞ւ երեկ գիշեր տուն գալիս ես լաց եղա, – հարցրեց նա: – Ես երբեք այդպիսի զգացում չեմ ապրել: Չեմ հասկանում: Եվ երբ դադարեցի լաց լինելուց, ինչո՞ւ չէի կարողանում խոսել, ինչո՞ւ ասելու ոչինչ չունեի ո՛չ քեզ, ո՛չ էլ ինձ:

Միսիս Մաքոլին պատասխանեց հեռվից, բայց այնքան հստակ ձայնով, որ տղան նրա յուրաքանչյուր բառ անսխալ լսեց։

– Կարեկցանքն էր, որ քեզ ստիպեց լաց լինել, – ասաց նա, – կարեկցանքը, կարեկցանքը ոչ թե այս կամ այն անհատի նկատմամբ, որ տառապում է, այլ ամեն ինչի նկատմամբ։ Եթե մարդը խիղճ չունի, նա մարդ չէ, նա դեռ իսկական մարդ չէ, որովհետև կարեկցանքից է ծնվում բուժիչ բալասանը։ Միայն բարի մարդիկ են լաց լինում։ Այն մարդը, որը լաց չի լինում աշխարհի ցավի համար, նա վատ է, քան կեղտը, որի վրայով քայլում է, որովհետև կեղտը դեռ սնում է սերմը, արմատը, ծիլը ու ծաղիկը, իսկ առանց խղճի ու կարեկցանքի մարդու հոգին անպտուղ է, ոչինչ չի կարող սնուցել, բացառությամբ ամբարտավանության, որը, ի վերջո, կարող է մարդուն առաջնորդել սպանության, գեղեցիկի սպանության կամ նույնիսկ մարդկային կյանքի սպանության։

Միսիս Մաքոլին խոհանոց վերադարձավ և սկսեց նոր գործով զբաղվել, մի գործ, որի ավելորդությունը նույնիսկ Հոմերը հասկացավ։

– Կյանքում միշտ էլ ցավ կլինի, – ասաց միսիս Մաքոլին, – սակայն այդ բանի գիտակցությունը չպետք է մարդուն հուսահատեցնի։ Լավ մարդը աշխատում է հաղթահարել այդ ցավը։ Իսկ հիմարը այդ նույնիսկ չի տեսնում, քանի դեռ չի զգացել իր մարմնի վրա։ Իսկ չար մարդը այն ավելի կխորացնի և կտարածի իր շուրջը։ Սակայն բոլորն էլ անմեղ են, որովհետև ինչպես չար մարդը, այնպես էլ հիմարն ու լավը իրենց կամքով չեկան այստեղ, և ոչ էլ իրենք իրենց ստեղծվեցին ոչնչից։ Նրանք ծնունդ են բազմաթիվ աշխարհների և բազմաթիվ սերունդների։ Չարերը չգիտեն, որ իրենք չար են և, հետևաբար՝ անմեղ են։ Չար մարդուն պետք է ներել։ Նրան պետք է սիրել, որովհետև մեր յուրաքանչյուրից ինչ-որ բան կա աշխարհի ամենաչար մարդու մեջ, ինչպես որ նրանցից ինչ-որ բան՝ մեր մեջ։ Նա մերն է, մենք՝ նրանը։ Մեզնից յուրաքանչյուրը մյուսներից անջատ չէ։ Գեղջուկի աղոթքը իմ աղոթքն է, մարդասպանի ոճիրը՝ իմ ոճիրը։ Անցյալ գիշեր դու լաց եղար, որովհետև սկսեցիր հասկանալ այս բաները։

Հոմեր Մաքոլին ձավարի վրա կաթ լցրեց և սկսեց նախաճաշել։ Նա հանկարծ զգաց, որ վերջապես կարող է ուտել։

ՀՐԱՀԱՆԳ

Առաջադրանքը կատարելու համար ուշադիր կարդացե՛ք տեքստը: Հարցերին սկսե՛ք պատասխանել այն ժամանակ, երբ տեքստի բովանդակությունն ամբողջովին հասկանալի կլինի:

Տրված պատասխաններից ընտրե՛ք միայն մեկ պատասխան և պատասխանների թերթիկի համապատասխան վանդակում նշե՛ք «X» նշանով:

(1) 31. **Տեքստի սկզբում հեղինակը.**

ա) Բացահայտում է գործող անձի լացի ու տխրության պատճառները:

բ) Գնահատում է ստեղծագործության գործող անձանց փոխհարաբերությունները:

գ) Նկարագրում է այն միջավայրը, որտեղ տեղի են ունենում գործողությունները:

դ) Ուշադրությունը կենտրոնացնում է գործող անձի հոգեվիճակի վրա:

(1) 32. **Մանուկ հասակում Հոմերը երբեք լաց չէր եղել, որովհետև կարծում էր, որ.**

ա) Անչափահասը լացելով կվշտացներ մորը:

բ) Լացը, միևնույն է, օգուտ չէր բերի:

գ) Միայն չափահասները կարող էին լաց լինել:

դ) Մորը դուր չէր գար նման վարմունքը:

(1) **33. Ո՞ր արտահայտության մեջ է երևում Հոմերի վիշտը։**

ա) «Ես ցավ զգացի բոլորի համար և նույնիսկ աղոթեցի, որ նրանց ոչինչ չպատահի»:

բ) «Եվ երբ դադարեցի լաց լինելուց, ինչո՞ւ չէի կարողանում խոսել, ինչո՞ւ ասելու ոչինչ չունեի ո՛չ քեզ, ո՛չ էլ ինձ»:

գ) «Երեկ գիշեր, աշխատանքից գալուց հետո քեզ հետ չխոսեցի»:

դ) «Հետո վերցրեց գդալը և պատրաստվում էր ուտել, բայց կանգ առավ տարօրինակ ձևով և սկսեց ուսումնասիրել գդալը»:

(1) **34. Հումերի կարծիքով.**

ա) Մարդը աշխարհում հիմնականում բացասական երևույթներն է տեսնում։

բ) Մարդը կարող է ուրիշներին դրդել գեղեցիկի ոչնչացմանը։

գ) Մարդու սիրտը ուրիշների նկատմամբ միշտ խղճահարությամբ է լցվում։

դ) Միայն մարդու բնավորությունից է կախված, թե ինչպես նա կընկալի աշխարհը։

(1) 35. **Ի՞նչ են ենթադրում միսիս Մաքոլիի այս խոսքերը.** *«Միայն բարի մարդիկ են լաց լինում»:*

ա) Բարի մարդիկ գիտակցում են, որ մեզանից յուրաքանչյուրը մի առանձին աշխարհ է:

բ) Բարի մարդիկ կարող են կարեկցել ուրիշներին:

գ) Բարի մարդիկ հեշտությամբ են տրվում զգացմունքներին:

դ) Բարի մարդիկ ուրիշներից առանձնացված չեն կարող ապրել:

(1) 36. **Ո՞ր արտահայտության մեջ է հեղինակը դիմում գրական գեղարվեստական միջոցի.**

ա) «Աշխարհը պետք է վերակառուցվի ամեն օր, ինչպես անկողինն ու այն տունը, որտեղ նույն մարդիկ են ապրում»։

բ) «Եթե կյանքը տխուր է, ազնիվ կամ անմիտ, դրա պատճառը մարդն է»։

գ) «Ես իսկապես տեսա Իթաքան և իսկապես ճանաչեցի այն մարդկանց, որոնք ապրում են Իթաքայում»։

դ) «Չար մարդուն պետք է ներել, նրան պետք է սիրել»։

(1) **37. Չար մարդկանց նկատմամբ ի՞նչ է զգում միսիս Մաքոլին։**

ա) Անհաշտություն։

բ) Անտարբերություն։

գ) Խղճահարություն։

դ) Ներողամտություն։

(1) **38. Միսիս Մաքոլիի կարծիքով, ի՞նչ կապ կա մարդու և հասարակության միջև։**

ա) Մարդը զարգանում է անկախ հասարակությունից։

բ) Մարդը իր գոյությամբ գեղեցկացնում է հասարակությունը։

գ) Մարդը մշտապես հոգում է հասարակությունը բարեփոխելու մասին։

դ) Մարդը հասարակության անբաժան մասն է։

(1) 39. **Ըստ ստեղծագործության՝ ինչպիսի՞ն պետք է լինի իսկական մարդը։**

ա) Նա պետք է աղոթի ուրիշների համար։

բ) Նրան պետք է մտահոգի համընդհանուր ցավը։

գ) Վիշտը նրան պետք է հանգստություն բերի։

դ) Վիշտը պետք է փոխի նրա տրամադրությունը։

(1) **40. Ըստ ստեղծագործության՝ կյանքին ուղեկցող ցավը.**

ա) Խախտում է մարդու անդորրը։

բ) Մարդու հոգին սնանկ է դարձնում։

գ) Սովորեցնում է մարդուն համակերպվել այդ ցավի հետ։

դ) Օգնում է մարդուն ձգտել առավել վեհին։

(5) 41. Ո՞րն է հեղինակի գլխավոր ասելիքը, և գեղարվեստական ի՞նչ միջոցներով է այն հաղորդված։

Նկատի՛ ունեցեք, որ 50 բառից պակաս պատասխանը չի ստուգվի։